

բայց որովհետեւ այս պատճառաւ խնդիրներ եւ վէճեր պակաս չէին ըլլար իր և Ս. Աթոռին միջև, ուստի Կ. Պոլսի պատրիարքին (Գրիգոր վրդ. Պատմաճեանի) միջնորդութեամբ յետոյ Մերկերէն ծախու կ'առնուին յիշեալ կալուածները (Տե՛ս անդ, Բ. Հտր. էջ 783):

1824ին Զմիւռնիացի Մուրատ Ազա և կինը Հեղինէ յիշատակներ կը հաստատեն Ս. Աթոռոյ մէջ. Թէև Սաւալանեանց իր Պատմութեան մէջ (էջ 948) հակառակը կ'արձանագրէ յիշելով թէ՛ Մուրատ վրասակար եղած է Ս. Աթոռոյ, բայց անոր գործին պատուական թարգմանիչը արդարութեան պարտք մը հատուցանելու համար ծանօթութեամբ մը մէջ կը բերէ անոր յիշատակները, որոնց մէջ Յոպպէի վանքին ի նպաստ յիշեալը նուիրած է 1<sup>0</sup>. Մեծ պարտէզ մը Յոպպէէն դուրս, մէջի գեղեցիկ տուներով, ջրհորներով, ծառատունկերով և ընդարձակ գետինով մը. (այս պարտէզը յետոյ Զմիւռնիացի Յովհաննէս պատրիարք խարխլացի օրէնքով փոխանակած է ուրիշ տուներու եւ կրպակներու հետ Երուսաղէմի մէջ). 2<sup>0</sup>. Հայոց Յոպպէի գերեզմանատունը յարակից ընդարձակ պարտէզով ու ծառատունկերով. 3<sup>0</sup>. Տուն մը նաև Յոպպէի մէջ, որ կը կոչուէր Ֆրանկի տուն (անդ, էջ 958-9):

1838ին Յոպպէի և չրջակայից մէջ կը ճարակի ժանտախտի հիւանդութիւնը. սուլթան Մահմուտ հիւանդութեան առաջընտանելու համար իր տէրութեան բոլոր սահմաններուն մէջ արգելանոցներ հաստատել կը հրամայէ, ըստ այսմ արգելանոց մ'ալ կը պատրաստուի Յոպպէի մէջ քրիստոնեաներու հին գերեզմանատան տեղին վրայ, սակայն ուխտաւորներն ու ճամբորդները կը դժկամակին մտնել հոն. ասոր վրայ առողջապահական տեսուչը կ'առաջարկէ երեք ազգերուն՝ որ ամէն մէկը իր գերեզմանատան մէջ մէյ մէկ արգելանոց շինէ և իր ծախքով կառավարէ զայն: Այն ժամանակ Յոպպէի մեր վանքին տեսուչն էր Մեսրոպ վրդ. Տիգրանակերտցի որ նորոգել կու տայ արդէն շինուած արգելանոցը (3 օգոստ. 1838) և այնուհետև ուխտաւորները փոխանակ Պէյրութի, Յոպպէի ազգային արգելանոցին մէջ կ'անցնեն զգուշութեան քառասուն օրերը: Երբ իսպառ կը դադրի մահացու ախտը, Օսմանեան տէրութիւնը պատրուակով մը կը գրաւէ Հայոց Յոպպէի արգելանոցը: Թէև տէրութիւնը կը հաւանի արգելանոցը ազգին դարձնել, սակայն հակառակ դիմում-